

Թուղթը կը դարձնի յետ. Խանտիւթ խաթիւն կըլնը Ենչ  
կէնի:

Մարդ կը ճամբիսի էն քեառսուն մարդու մօտ, կըսի.

—Ո՛ր կերթայ, կուի կէնի, իս զէն կառնիմ:

295. Էդա քեառսուն մարդ կըսին.

—Վրէ՛ մինը էրթանք, ո՛ր Խանտիւթ խանըմի ծիւց պառ-  
կեր է, թը էն էրթայ կուի:

Էդա մարդ դառնայ կգեայ, Խանտիւթ խաթիւնըն կըսի.

«Որ Խանտիւթ խաթիւնի ծիւց պառկիր է, թը էն էրթայ»:

296. Դաւիթ կըսի.—Աղէկ, իս տըլըմ, էրթամ:

—Դիւ մէրթար, իս աէրթամ, էսայ Խանտիւթ.

—Չէ՛, էսայ, իս աէրթամ, դիւ կնիկ իս:

Ամօթ չի՛ ըծը կեօրա, իս մնամ, դիւ էրթաս:

—Կերթաս գինա՛, էսայ.

Վուր քի սպանին, քիւ ջանտակ դո՛ր գնտընիմ:

297. Չէ՛, խաչպատրաստին թիվի վերայ է:

Սկնայ մում գանիս թղթի վերայ.

Էնու աեղն բայլու կէնի:

Դաւիթ թիվն կը բանայ յետ.

Կե՛՛, ինչպէս մսէ խաչ թիլի վերայ:

298. Գինա՛, տըսայ, կըսի Խանտիւթ.

Կգեամ, կան կգեամ, գնտընիմ:

Դաւիթ կըսի.—Իս կերթամ.

Էդա քեառսուն մարդ խան դիւս ըգելց.

Վուր կուի չէնին, վրէ՛ կանգնիր ին:

299. Խանտիւթ կգեայ էն քեառսուն մարդ խանի դիւս.

Գեալիւ բաշտան էն քեառսուն մարդն էլ կը կանգնին:

Խանտիւթ էլ դիւռ չը բանայ, խանի դիւս.

Փանճարի դիւռ կը բանայ, մէմէկ թիվքեր կը բունի, փան-

ճարից կը շփուտի դիւս.

Ըզ ո՛ր կընկնի գետըն, կը մեռնի:

—Վայ-վայ, կըսի, էդա՛ մարդըր իկէրին, ըծր՛ տանին:

300. Խանտիւթ կգեայ.—Դաւիթ, կըսի. խանի դիւս:

Դաւիթ կգեայ, կրիշկի, խա՛, յեօգէն մարդ չկայ:

Խանտիւթ կըսի.—Դաւիթ, փանճարից ըրշկի:

Դաւիթ կըրշկի, ինչ փանճարից թիլը է, սկուն տապկա-  
ցիր է, մնացիր է գետըն, յըմեն մեռած է:

301. Դաւիթ յէն տե կը ծծողայ կըսի

—Փառք քի Առտուած, իմ կնիկ քան զի էլ կտրիճ է:

Դաւիթ ձեռ կը թլի Խանտիւթի ձեռ, կը բունի:

Կըսի.—Գէ՛, մնացի բարեօվ: